իրաց պակասութիւն բերի, և ոչ ոք գտցի 'ի հատորս կարգի Օրինաց հակառակ կենաց և պատուոյ իւրոյ եթէ ոչ շահաւէտութեան, և ազատապէս Աստուածպաշտութեան՝ ըստ հրամանի բանին Տեառն որ ասաց՝ մինչ դեռ ժամանակս 'ի ձեռս ձեր է, գործեցէք զբարիս. թէպէտ եղուկ երևի մեզ վասն անցանելոյ ժամանակին երջանկութեան մերոյ Հայկաւ, Տիգրանաւ և Արմենեաւ և այլ բարերարօքն մերովք ինքնակամ վարիւք անցանելեօք, որ ոչ զգոյշացաք փակել զդրունս փոփոխական բնութեան մերոյ, այլ գոհութիւն և փառս պարտ է մատուցանելով առ Տէր ասեմք վասն անցելոյ ժամանակին ինքնակալ և ինքնակամ և կամաւ հրամայող տերանց մերոց, որ միայն այսքան ինչասիւք մեք փրծաք և նոքայ մեռան և թաղեցան 'ի գերեզման, այլ նոքայ որ ամբարշտանալով անիրաւացան և գոռոզութեամբ և ինքնահաճոյութեամբ վարելով իշխանութիւնն իւրեանց 'ի վերայ աշխարհին Հայոց՝ զրկելով, կողոպտելով, լլկելով և ամենայն անասնական բնութեամբ շարժմամբ անցանելով ժամանակս կենաց իւրեանց, մինչ կորեան ինքեանք և կորուսին պատիւն մեր, և մատնեցին սերունդն ազգին Հայոց 'ի գերութիւն և աշխարհն ժառանգութիւն այլ ազգաց. մինթէ արիւնն Գնէլի բարեպաշտի, և կամ Մուշեղայ երախտագիտի և այլոց բազմաց անիրաւաբար յեղելոյ սպան-